

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարատ 1-ն ԷԱՃԱՊԶԲ-2025/7-3-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Համազգեստ, լուսարձակող դետալներով, փրկարարական աշխատանքի համար, նախատեսված է տարվա բոլոր եղանակների համար, սեռը՝ յունիսեքս, գույնը՝ կապույտ: Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից: Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 214 գրամ/մ², բաղադրությունը՝ 51 % բամբակ, 49 % պոլիէսթեր: Գործվածքի տեսակը՝ «ԲԵՐԵՏԱ», գույնը՝ կապույտ: Բաճկոնը՝ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի տրակտոր տեսակի երիզաշղթայով: Օձիքը՝ 5 սմ լայնությամբ (շեղումը՝ ±0.5 սմ), ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի առաջնամասի կողային հատվածներում ներկարված են մեկական թեք գրպաններ՝ շղթայով փակվող, իսկ կրծքավանդակի մասում 2 ծավալուն գրպաններ՝ կափույրներով: Կափույրները փակվում են դարձերեսին և գրպանների վերնամասում մշակված կաչուն ժապավեններով: Բաճկոնի աստառը սև, մետաքսե գործվածքից: Կրծքամասի գրպանների լայնությունը՝ 14 սմ, երկարությունը՝ 16 սմ (շեղումը՝ ± 2 սմ), տեղակայված են կենտրոնական ուղղահայաց կարից 5-6 սմ հեռավորության վրա: Կրծքամասի ձախ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1 սմ հեռավորությամբ, կարվում են 12x2.5 սմ չափսով սև գույնի կաչուն ժապավեն: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 12.5x2.5 սմ չափսով կաչուն ժապավեն «Արյան կարգ» տարբերանշանի համար: Աջ թևքին՝ ուսագլխից 7 սմ ներքև, կարված է ԵՊԲՀ լոգոն ասեղնագործված: Բաճկոնի կողային ստորին հատվածներում և թևքերի վերջավորություններում գործվածքը մշակված է 5-6 սմ լայնության ռետինե ժապավեններով: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13 սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4x2.5x0.3 սմ (բարձրությունx լայնությունx հաստություն)</p>

չափի տառատեսակով ասեղնագործված է ԵՊԲՀ լոգոն և «ԵՊԲՀ փրկարարական ջոկատ» արտահայտությունը:

Բաճկոնի վրայի բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով (բեժ): Տաբատը՝ ազատթող փողքերով, առաջնամասում 2 կողային ներկարված գրպաններով, հետևի աջ կողմում ներկարված 14x14 սմ չափսի մեկ գրպանով: Գուլֆիկը շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով: Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու կողային հատվածներում չափը կարգավորող 2 ռեզինե ժապավեններով՝ 5 սմ լայնությամբ (շեղումը՝ ± 0.5 սմ): Գոտին ամրանում է կոճակով: Կեպին՝ աստառով, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3 մմ հաստության սոսնձային կտորից միջադիրով: Հովհարը միջադիրված է առնվազն 3 մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադիրով: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում՝ 7 սմ (շեղումը՝ 0.5 սմ): Հետնամասում երկկողմանի մշակված է պլաստմասե չափսի կարգավորիչ: Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է ԵՊԲՀ լոգոն շրջանաձև (կտրամադրվի Գնորդի կողմից), 56 մմ տրամագծով (շեղումը՝ ± 1 մմ), սև կտորի վրա ասեղնագործված:

Համազգեստի չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից: Բաճկոնի և տաբատի ներսամասում մշակվում է խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված արտադրողի անվանումը, չափս-հասակը, խնամքի պայմանները: Փաթեթավորումը՝ թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Գնորդի պահանջով մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից Վաճառողին:

Մատակարարումից հետո հայտնաբերված խտանի դեպքում Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով դրանք վերացնել: Գնորդի պահանջով Վաճառողից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության և ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված կազմակերպությունից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Арарат 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПЗР-2025/7-3-ЕПРՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	